



## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

### Կայացավ Մասրիկ- 1 արևային ֆոտովոլտային ծրագրի նախամրցութային կոնֆերանսը

2018 թվականի հունվարի 31-ին Երևանում տեղի ունեցավ «Հայաստանում արդյունաբերական մասշտաբի Մասրիկ-1 արևային ֆոտովոլտային ծրագրի» նախամրցութային կոնֆերանսը, որը կազմակերպել էր Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը: Կոնֆերանսի ընթացքում ներկայացվեցին Ծրագրի նախապատրաստական աշխատանքները, մրցույթի հիմնական ընթացակարգերն ու ժամանակացույցը, Ծրագրի կողմերի միջև կնքվելիք պայմանագրերի հիմնական դրույթները, Ծրագրի հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմացման մեխանիզմները:

Կոնֆերանսին մասնակցում էին նախարարակազմումն անցած ընկերությունների ներկայացուցիչները, որոնք հնարավորություն ունեցան հարցեր ուղղել և ստանալ պարզաբանումներ կոնֆերանսի մյուս մասնակիցներից: Կոնֆերանսին մասնակցում էին ներկայացուցիչներ գործարքի խորհրդատու ընկերություններից, ՀՀ հանրային ծառայություններից կարգավորող հանձնաժողովից, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական



պաշարների նախարարությունից, Հայաստանի էլեկտրական ցանցերից, Հայաստանի էներգետիկ սեկտորը ներկայացնող ընկերություններից, միջազգային ֆինանսական կազմակերպություններից, Հայաստանյան բանկերից:



Համաժողովի հանդիսավոր բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան փոխվարչապետ, ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը, Համաշխարհային բանկի Հայաստանյան գրասենյակի տնօրեն Սիլվիա Բոստրեյդը, ՀՀ

էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հայկ Հարությունյանը, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի տնօրեն Արմեն Մելիկյանը:

Հիշեցնենք, որ Ծրագրով նախատեսվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկ համայնքի վարչական տարածքում կառուցել 46-55 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայան: Կայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, տնօրինման և շահագործման նպատակով հայտարարվել է մրցույթ, որի արդյունքները նախատեսվում է ամփոփել 2018թ. գարնանը: Հաղթող կճանաչվի այն ընկերությունը կամ կոնսորցիումը, որը կառաջարկի ամենա ցածր սակագիրը:

## Հայաստանում չգազաֆիկացված համայնքների Էներգաարդյունավետության բարձրացման ծրագիր

Ծրագրի շրջանակներում չգազաֆիկացված համայնքների բնակիչների կողմից մինչ 2018թ. մարտ ամիսը «Գլոբալ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին և ԱԿԲԱ Լիզինգ ՎԿ-ին ստացվել է 356 հայտ արևային ջրատաքացուցիչների և արևային ֆոտոֆոլտային համակարգերի տեղադրման համար: Տեղադրվել է 11 հատ արևային ֆոտոֆոլտային համակարգ՝ ընդհանուր 30 կՎտ դրվածքային հզորությամբ (յուրաքանչյուր տարի 47,152 կՎտ·ժ էլեկտրաէներգիայի արտադրությամբ) և 348 արևային ջրատաքացուցիչ համակարգ՝ 945 հազար կՎտ·ժ տարեկան էներգիայի արտադրությամբ: Հայաստանի



վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից իրականացվող այս ծրագրի նպատակն է ֆինանսական կազմակերպությունների միջոցով բարձրացնել էներգաարդյունավետության մակարդակը և ֆինանսավորել ներդրումները մաքուր էներգիայի ոլորտում Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում: Ծրագիրը միտված է նվազեցնելու ոչ արդյունավետ էներգասպառումը և ընդլայնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի էներգետիկ տեխնոլոգիաների օգտագործումը:

## Էներգետիկ հաշվեկշիռ 2016

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի պատվերով էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտը իրականացրել է 2016 թվականի ՀՀ էներգետիկ հաշվեկշռի կազմումը: Էներգետիկ հաշվեկշիռը տեղեկատվա-վերլուծական կարևորագույն գործիք է երկրի էներգետիկ ոլորտի ուսումնասիրության և ազգային քաղաքականության մշակման համար: Նրա միջոցով գնահատական է տրվում երկրի էներգետիկան վտանգության մակարդակի, էներգիայի մատակարարման բազմազանեցման աստիճանի, վերականգնվող էներգետիկայի զարգացման, ջերմոցային գազերի արտանետումների ծավալների և էներգետիկ ոլորտի այլ կարևոր բնութագրիչների մասին: Էներգետիկ հաշվեկշիռը ներառում է էլեկտրական էներգիայի, բականգազի, ջերմային էներգիայի նավթամթերքի, ածխի փայտի, այլ բիովառելիքի, վերականգնվող էներգակիրների հաշվեկշիռները:



2016 թվականի ՀՀ էներգետիկ հաշվեկշռին հայերեն և անգլերեն լեզուներով կարող եք ծանոթանալ Հիմնադրամի պաշտոնական կայքում ([www.r2e2.am](http://www.r2e2.am)):

# Աջակցություն էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում


Գերմանահայկական հիմնադրամը, KfW բանկի, Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի և տեղական ինը ֆինանսական հաստատությունների հետ համատեղ իրականացնում է «Աջակցություն էներգախնայողության ֆինանսավորմանը ՓՄՁ-ների ոլորտում» ծրագիրը, որի շրջանակներում Հիմնադրամի փորձագետները իրականացնում են ներկայացված հայտերի էներգետիկ ուսումնասիրություններ և տալիս համապատասխան եզրակացություն KfW բանկին:

## Ծրագրի 2016թ. օգոստոսից 2018թ մարտի 1-ը ժամանակահատվածի հիմնական ցուցանիշները.

Հայտերի քանակը`	200	ԷԽՄ-ներին ուղղված ներդրումը`	7.915.3 մլն. դրամ
Մինչև 80 մլն ՀՀ դրամ ներդրման գումարով`	181	Ակնկալվող էներգախնայողությունը`	
80 մլն ՀՀ դրամից ավել ներդրման գումարով`	15	484.516.640 կՎտԺ	
Դրական եզրակացությամբ հայտերի քանակը`	198	Էներգաարդյունավետությունը`	36 %
Ներկայացված վարկի գումարը`	7.458.5 մլն. դրամ	CO2 արտանետումների կրճատում`	226.021 տ

## Հողմային էներգիա

### Evolution of wind turbine heights and output



Sources: Various; Bloomberg New Energy Finance

Քամին համարվում է վերականգնվող և մաքուր էներգիայի կարևորագույն աղբյուր: Հողմային էլեկտրակայանները կարող են բաղկացած լինել մի քանիսից մինչև տասնյակ և հարյուրավոր հողմային տուրբիններից: Ակնհայտ է, ամենից շատ էներգիա արտադրում են բարձր և մեծ երկարությամբ թիակներով հողմային տուրբինները, սակայն քչերին է հայտնի, որ դրանք նաև ամենաարդյունավետն են: